



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Chrysomelid

9(47.925)
U-81

9155

3(47.926) րմ

Ա-81

38
493

ՎՈՒՅՈՒՆ «ԿԵԼԷԿԱ» ԳՐԱՏԱՆ ԹԻՒ 1

ՆԻՐՔԻ ՏՆՑ ՄԱՐՏԻՐՈՍՍԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ



ՏԵՂԵՎԱԳԻՐ ԶԱՎՈՐ ՊԱՊԻՅԵԱՆԻ

(ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՆԵԱՆ ԷՏԻՐՆԷԻ)

Brudisju sr. Fetsawlianekhi jannayurawinow

«Արդարութիւնը կը բարձրանէ ազգերը,
եւ մեզքն ու սճիրը կը կործանեն զայն»:
ՍՈՂՈՄՈՆ

Հ ա յ ա ց ու ջ
ՅՕ.ԿՈՐ ՍՅ.ԲԳ.ԻՍԵՍ.Ն



Կ. ՊՈԼԻՍ

ՎԵԼԷԿԻԱ, ԳՐԱՏՈՒՆ

Թիւ 37, Գապիւսեան փողոց, Բերա

1919

Գին՝ 12½ դր., Բուսի ծախսով 15 դր.

24 JAN 2006

19 AUG 2011

ՆԻԹԵՐ ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

9(47.925)

Ա-81

ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՅԱԿՈՒ ՊԱՊԻԿԵԱՆԻ

(ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ԷՏԻՐՆԷԻ)

Ֆրանսիա ՏՐ Փրիսանսեի յառաջաբանով



Հ ա յ ա ց ու ց՝
ՅՕ.ԿՈՒ ՍՍ.ԲԳ.ԻՍՏԵՍ.Ն



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. «Կ.-ԱՐՁԱԳԱՆԳԻ»

1919

(28511)

9755

21.02.2013
МАТ

6010

831-97



(Քիթե Զարդարեանի)

ՅԱԿՈՒՐ ՊԱՊԻԿԵԱՆ

(1856 - 1909)

Հա՛յր,
Իբրև կոթող յաւերժական,
այս Մասեանը՝ Բու անմեռ յի-
շատակից կը նուիրե գ՛րեզ
սրտնոյ որդիդ՝

ՅԱԿՈՒՐ ԹՈՉՈՒՆԵԱՆ



ՅԱԿՈՐ ՊԱՊԻԿԵԱՆ



1909ի գարնան եր, երբ Մոնկոլեան սեւ քաթը կարմիր եր ներկեր կիրկիրոյ ամբողջ դաշտը եւ վերածեր եր զայն համասարած գերեզմանի մը . Սիհուն եւ Ճիհուն հայ արիւնի հեղեղներ էին ընդուներ: Ու Երիսասարդ-Քուրեբեր, յայտնի թէ ծածուկ, դիւանեց ժպիտով, ձեռներնին շփեր էին՝ գերագոյն պարսք մը կասարած ըլլալու բորենավայել յբուրեամբ, քննելով այսպէս՝ Քաղաղակիրքութեան ալ, իրենց պաշտած Ալլանի՛ն ալ երեսին: Հին թէ նոր բուրք մտայնութեան արդիւնն է եղեր այդ, որ չէ ուզած երբեք ըմբռնել թէ այս երկրին երեկուան եւ վաղուան տերերն ալ կրնային իրաւունք ունենալ ապրելու:

Կը հասնին սակայն սրափումի օրերը, պէտք էր մոխիր ցանել Մեծ եղեռնին վրայ, դիաքաղը կասարել խաչուած Արդարութեան: Օսմ. երեսփ. ժողովի բուրք մեծամասնութիւնը, արտառուչ համերաշխութեամբ մը պաշտօն կուտար իր իսկ անդամակիցներէն «օսմանցիացած» Հայու մը՝ անոր բերելիք նպաստաւոր տեղեկագրութեան մը կանխահոգ մտածումով: Այսպէս կ'ենթադրէին գեթ Հայերն ալ, որ աղաղակ բարձեր էին այդ ընտրութիւնը բեկանելու համար:

Եւ ահա՛ Պապիկեան Պոլսէն կը մեկնէր անձուկ՝ թախիծը կուրծքին մէջ: Կը հասնի ադէսին վայրը, կը տեսնէ գործուած Ռնիրը. եւ, անոր դէմ աղաղակող ընդվզումն է որ կը փրփրի իր մէջ: Ասոր ապացոյցն են

նաեւ, տղեկագրէն զաս, բնագրին ետելը կցուած այն
քանի մը հեռագիրները, որոնցմով անիկա ի զո՛ւր կ'ո-
գեկոչէ ու շացած Արդարութիւնը:

Վերադարձաւ Պապիկեան՝ բովանդակ Հայութեան
խռովքը կրելով իր մէջ, եւ, իր ննուրեանց արդիւնքը
կազմող այս սարսուալի տղեկագիրը հազիւ թէ կ'ա-
ւարտէ՝ սեւ ձեռքեր կուզան խորհրդաւոր մահով մը վերջ
դնել իր կեանքին:

Մեռաւ Պապիկեան, բայց իր անունը առ յաւեւ պի-
տի մնայ հայ անմահ Հերոսներու պանթէոնին մէջ:

*
* *

Պապիկեան ծնած է Էսիրնէի մէջ՝ 1856 Փետր. 23ին:
Աւարտած էր տղույն ազգ. եւ Ջրասն. վարժարաններու
ընթացքը: 1877էն սկսեալ երկու տարի Պոսնիայի մէջ
վարած է Թուրքիոյ Արսաբին Գործոյ Տեսչութեան օգ-
նականի պատճօնը: Յետոյ երկու տարիի չափ՝ ալ մնա-
ցած է իր ծննդավայրին Առեւտր. Դասարանի քարտուղա-
րութեան պատճօնին մէջ. 1881ին իրաւագիտութեան հե-
տեւելով՝ երկու տարիի չափ դարձեալ Էսիրնէի մէջ պա-
տճօնավարած է իբր Վերաբնիչ Ասեանի անդամ: 1891ին
Պոլսոյ մէջ սկսած է գործելու իբր փաստաբան, եւ
1902ին կրկին պատճօնով Էսիրնէ դառնալէ վերջ, 1905ին
կ'ընտրուի Երեսփոխան օսմ. առաջին խորհրդարանին
որուն մէջ Օսմ. Մահմադարութեան Քննիչ Յանձնաժո-
ղովին անդամ կ'անուանուի: Վ'անդամակցէր Իրքինա-
տի կուսակցութեան, սակայն երբեք չէ դադրած իբրեւ
Հայ գործելի: Առանայի եղեռնի մասին Երեսփ. Ժողո-
վին համար իր պատրաստած այս տղեկագրին իբրեւ
հասուցում՝ Ժեռն-Թիւրքերու կողմէ քունաւորուելով կը
մեռնի 1909 Յուլիս 20ին: Պապիկեան կանխաւ այրիա-
ցած ըլլալով կը բողո. 4 աղջիկ եւ 2 մանչ զաւակներ:

Իր փեսաներն են Ֆիլիպի մեջ յայտնի վանառական՝
Ռուբեն Ասարնեան, Պոլսեցի առեւտրականներէն՝ Վա-
հան Տեր-Յակոբեան եւ վանառական-դերձակ՝ Յակոբ
Քոչունեան: Իր մանչ զաւակներէն մին կը գտնուի Ամե-
րիկա, իսկ միւսը իբրեւ պահեստի սպայ կը ծառայէ
օսմ. բանակին մեջ:

Ահա տիպար մարդ մը, եւ ընտանիքի տիպար հայրմը:

ՅԱԿՈՐ ՍՍՐԳԻՍԵԱՆ

Քերտ, 1 Փետր. 1919



ՊԱՊԻԿԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ



Պիսի չի կրկնեւ այսօր այն խորհրդածութիւնները՝ որոնց մասին խիստ յաճախ գրած եւ, մասնակիչ ընկողմ այն սեղը՝ ուր պէտք էր դնել Հայկական Հարցը հաշտութեան¹ դաշնագրին մէջ։ Չիկայ ուղղաւիտ մարդ մը որ անցիսանայ թէ անկիրա անյեւածգեղի հրաքորքով խնդիր մըն է։ Եւրոպա պարզապէս մտնուող մասն մը ըրած պիտի ըզբար՝ կարճ ժամանակէն արիւննայի հաշտեցարդարութիւն մը պատրաստելով։

Ներքին գաւառներէ հասած շարերը հետզհետէ կը դառնան անելի վրդովիչ։ Յայտնապէս կ'երեւի որ Քիւրտերը մը-ապրած են վերանորոգելու իրենց քանի սարուայ շահաստ-կութիւնները։ Այնպէս աւելի ժողովրդի՝ Հայերու մեծամաս-նութիւնը՝ կ'ապրի անսուղութեան մէջ, մշտեցեւական հար-ւածի սակ։ Պոլսոյ մէջ քուրդ իշխանութիւնները ո՛չ ժա-մանակը, ո՛չ ոյժը եւ ոչ քերէւս հաստատ կամք ունին Քիւրտիստանի առաջակցեցնելու հարկադրելու՝ հանրային կարգապահութեան եւ խաղաղութեան յարգանքը։

Այս իրողութիւնները պէտք է կրկնել, պէտք է անդա-դար յայտարարել որպէսզի անոնք ծակօրացունի հանրութեան կողմէ. որպէսզի անոնք անոր մտքին մէջ հրեղէն սառերով քանդակուին եւ անոր սակ անհրաժեշտ եզրակացութիւնները։ Եւրոպա գուր սեղ կ'անցընէ գործակաւէ կիրաւորութեան եւ քարոյսական թուրութեան մը երեւոյթը։ Անկիրա պիտի չիկրնար ակամաստը ըլլայ դեպքերու կրկնութեան մը, — նոյն իսկ անեւափոքր ասիւնանով — Հայկական Հար-ժակներուն, առանց ցնցուելու այն դիմումներու հարուս-

¹ Այլապէս Քիւրտիստան կ'ակնարկէ պաշտօնեան պատերազմի հաշտութեան։

ձեռն՝ որոնց հետեւանքները անհաշուելի պիտի ըլլային: Եթէ Կոզմոսի որ ներկայ առաջադրուած հաշտութիւնը սեռական կեանք ունենայ, միակ անկրեպ միջոց կայ, այն է՝ Թորրիան վերածել իր աւսական Կայսրութեան, ասով քոյր չի սաշու հաւար որ ճակատագրորէն յիշնայ ընդ սոցալիսի մը մէջ՝ որ պիտի վստահեցնուի անոր ամբողջութիւնը, ինչի իսկ իր աւսական ստացումները: Այնքան իրաւունք ունի որաւազու այն ճշմարիտ վստահը՝ որ կը ծանրանայ Հայաստանի և հետեւաբար քոյր քաղաքակիրք աշխարհի վրայ: Եթէ պիտի ըլլար ընդ ապագոյցներու, թաւական է ամեն անկեղծ մարդոց ուշադրութիւնը հրաւիրել իրապէս ջանջալիս զիստարարի մը վրայ:

Կոզմոս անհարկելի օտ. երեսփոխան Յակոբ Պապիկեանի տեղեկագրի՛ն ի հասին 1909 Ապրիլի Աստուայի կոտորածներուն: Այս տեղեկագրի՛ն գոյութիւնը յայտնի էր, զիստե՛ն որ շուր երբ էր թէ սարարար Պապիկեանի դեպքերու ուսումնասիրած և գրի առած ըլլալու և իր եզրակացութիւններէն մէկ փակին հակերայի ուշադրութեան յանձնելու իր անխնայեղութեանը համար՝ իր կեանքը վրայ տուած էր: Գաղտնի մեղացած էր, ինչի իսկ ընկերք, միեւնոյն իր քուր պաշտօնակցի՛ն՝ Եւստոֆ Բեւաջ պիտի տեղեկագրի՛ն կ'անյայտանար Զրաղանի պաշտի հրդեհին մէջ: Երկայ պահուն արգում էր գաղտնիք: Պապիկեանի տեղեկագրի՛ն սեռագրութիւնը ձեռքը սնցած է Հայերուն՝ որ գայն սպարեղ սարով գաղտնիօրէն ցում ևն, որիկ օրինակ մը ձեռքը ինկած է Թաւրի քոյրակցի՛ն՝ որ անոր մասին վերջու՛ճում հրատարակած է ընդարձակ մեքթորումներով: Նպատակ չունիլ անկեղ հասարակութեան հրանցելի, կը թաւե որ ըստ թէ այդ տեղեկագրի՛ն կը շատարանէ կարգ մը աջատու կեներ: Աստուայի ջարդերը սակեանեմ յախով ցոյց կուտան Կոզմոսի արարեան ուղղակի պատասխանատուութիւնը: Այդ Կոզմոսի արարութիւնը իր շնորհը ընդունած էր Իթթիհաս և Թեւաթ-

քիւն: Երեսասարդ-Թճարֆերը, յեղափոխութեան հանդեպ
Հայերու սնուցած բարի տրամադրութեան եւ սարած եռան-
դուն ընկալիցութեան հակառակ, այս ողբաշի գործի ըն-
թացֆին՝ Հայ սարաբաղի ցեղին ի նպաստ գործելոյ եւ կա-
ռաւարութեան վրայ ծանուցող պաշտպանելոյ սարակաւ
պարսակաւնութեան ձեռք բացարձակ անկարողութիւն ընդ
սուած են: Անկէ վերջ աննոյք անկէ ինչ ըրին՝ խեղդելոյ
համար գոհերու գակասկերը եւ սպառնալելոյ համար ան-
պատիւ ընկալը յանցապարտ պաշտօնութեան:

Եւստորինակ իրողութիւններ դժեկ ընչս ընդ կը պիտեն
Հայկական Հարցին վրայ: Ապացուցուած է որ, Օսմ.
կառաւարութիւնը, ընչայ այն Ապշիւր Համիտի գործակալ-
ներուն՝ թէ յեղափոխութիւնը կեղծողներու ձեռք, ի վիճա-
կի չէ խանի ընդ միջին Հայերուն երաշխաւորելոյ անկա-
րակաւ — կեանքի, ազատութեան եւ ինչֆի — իրաւունք-
ներ՝ գոր անկէ ընկերութիւն կը ջանայ սպառնալել: Երթ-
ուարութիւնը ներքեւ պարզ է. այն որ Եւրոպա. Հայոց ի
նպաստ փոխանորդ կը կանգնի այս դաշնագրի ձեռք՝ որ նոր
Թճարֆոյ դիրքը պիտի ընտրուի՝ ստեղծելոյ սոսնձաւայտակ
պարտաւեր. այսինքն — փորձաւորութիւնն է որ գայն կը
թերադրի — Եւրոպայի ընտրուած կառաւարի, ընդ, իրեկ
հակադրուած եւ իր հաւանութեանն դուրս անխափսէի:

Եւրոպա, կա՛ն պիտի է հրաժարի իր պարսակաւնութեան
այս հակաւ թաժիկէն եւ սոսնձաւայտակ պիտի հաւանութեանն
ստեղծ ընկալուած Հայաստանը, մարդկային ազգի վրդախաւ
խիղճը. կան այն է որ պիտի ընդունի այս գոհերը իրեկ
դաշնակներուն ձեռքէն ազատող օտար միջամտութեան ընդ
հետ՝ ազատ սպարեղ ընդ սալ բոլոր գակաւնութիւններուն
եւ հակաւարտութիւններուն՝ Ասիական Թճարֆոյ թաժակ-
մանք:

Ա. խարի թոյր ընտրութիւնները եւ հետաւան-
քիւնները այդ մասին թան ընդ պիտի չի կրնայի ընել:

Հայտնութեան ժողովի օրակարգին վերցնել Հայկական Հարցին խորագրին քննութիւնը, պիտի նշանակէր ճշխոյանքներու ատենակէն անոնցին գործել: Որ եւ է պատճառաբանութեամբ հրաժարի՝ Հայաստանի ընծայելու միակ դրութիւնը. որուն անպիտանութիւնը նմանօրինակ պարագայի մը մէջ փորձառութիւնն ապացուցած է Լիբանանի կամ Մամուսի տեսակ մը ընդդէմնուած ծրագրով, պիտի նշանակէր ո՛չ թէ սեղծել իրաց վիճակ մը, որ անբողջ ժողովարդի մը չարչարաններուն զնով պիտի արժէր որ ըզար, այլ շրջապի՝ արեւնի եւ արցունքի յաճախանքէ մը ետք՝ բախումը Ասիայի եւ Եւրոպայի, այսինքն Իզմանութեան եւ ինչ որ կը կոչուին՝ Քրիստոնէութեան միջեւ: Այս վերջին տարիներու ընթացքին մեկն հարկադրուեցանք արձանագրելու բազմաթիւ ողբալի սեանկութիւնները արեւմտեան պիտանագիտութեան. այս կարգի նոր սեանկութեան մը հետապասկերին մասին ո՛րքան ալ քիչ համոզուած ըզրան, կը խոստովանիմ որ դժուար է ինձ՝ անոր կարեղութեանը վրայ հաւատք ընծայել:

ՅՐԱՆՍԻՍ ՏԸ ՓՐԷՍՄԱՆՅԷ

Բարիզ, 25 Ապրիլ 1913



ՄԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԷՏԻՐՆԷՑ ԵՐԵՍՓՈՒԹԱՆ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆԻ

«Արդարութիւնը կը բարձրացնէ
ազգերը. և մեղքն ու ոճիրը կը
կործանեն զայն»:

ՍՈՂՈՄՈՆ

Թողած ըլլալով Պոլիսը 12 Մայիսին, մենք, Յա-
յիգ պէյ (Պետական Խորհրդոյ Նախագատ Ատեանի նա-
խագահ) և Յարութիւն էֆ. Մոստիշեան (Մանտաթըրի
վիլայէթին Դատական Բննիչ)՝ պատուիրակներ Բ. Դրան.
Երեսփոխան ԵՆԼՈՒՓ Բէժալ պէյ և Ես՝ պատգամա-
ւորներ Օսմ. Խորհրդարանի, 16ին հասանք Ատանա,
այդ քաղաքին և իր շրջականերու մէջ տեղի ունեցած
արիւնալի պատահարներուն, — որոնք տրամեղուցած
են բոլոր օսմանցիները — պատճառները և նկարագիրը
ճշտելու և ճշմարտութիւնը ճանչցնելու պաշտօնով:

Մեկնելու ատեն կը մտածէի որ այս ցաւալի եղե-
լութիւններու վերաբերեալ բոլորը շատ չափազան-
ցուած էին, և խիստ կը փափագէի որ այնպէս ըլլար,
վանդի հին վարչութեան օրով, առանց ոչ մէկ պատ-
ճառի, հարիւր հազարաւոր անմեղ Հայերու արիւնք
գետ չէր չորցած, և այս խեղճ զոհերու անմեղութիւնն
ալ վերջապէս երեւան ելած ըլլալով, մեր միւսլիման

հայրենակիցները — մէջն ըլլալով կրօնաւորները եւ հասարակ ժողովուրդը, — անոնց հողակոյտը այցելած էին, որպէս զի ատով Հայերուն վիշտը կարենան մխիթարել և մանաւանդ ջնջել ամօթալի մէկ էջը քաղաքակրթութեան պատմութեան :

Այսպէս, բնականաբար ոչ ոք կը փափագէր դարձեալ կրկնուած տեսնել, ի՛նչ չափով որ ըլլայ, նոր դէպքեր՝ որոնք անցեալ սղբերգութիւնները յիշեցնէին :

Սակայն, բարէ՛, ստիպուած եմ հրապարակաւ յայտարարելու որ իմ անձնական հաստատումներս զիս բոլորովին յուսախար բրին :

Թող ըսեն ի՛նչ որ կ'ուզեն : Ամէն ոք իր սեփական կարծիքը ունի : Ըստ իս, նմանօրինակ դէպքերու կրկնութիւնը անվրէպօրէն արդիւլելու միակ միջոցն է՝ ճշմարտութիւնը ծանօթացնել այնպէս՝ ինչպէս որ է, առանց ամենափոքր վերապահութեան : Եթէ, բնդհակառակը, ջանք տարուի այս դէպքերու մեծութիւնը նըւազեցնել, եթէ ուղուի պատասխանատուութեան բաժին մը վերագրել զոհերուն, ատիկա՝ իմ կարծիքով պիտի նշանակէր՝ բաց ճամբայ մը ձգել միեւնոյն դէպքերու կրկնութեան,

Անա՛ թէ ինչո՛ւ կ'ուզեմ յտակօրէն և անկեղծութեամբ ոչ ոքի դէմ խնայելով Ձեզ ծանօթացնել արդիւնքը իմ քննութիւններուս և հաստատումներուս :

Տասնըչորս տարեկանէս սկսեալ կեանքիս մեծ մասը անցուցած եմ քաղաքական խռովութիւններէ փոթորկուած միջավայրերու մէջ : Պուլիարական ապստամբութեան միջոցին Սօֆիա կը գտնուէի. թուրքւոս պատերազմի ատեն Պոսնիա էի՝ կատարեալ քաղաքային պատերազմի մէջ : Կ. Պոլսոյ և Քրք-Քիլիսէի ջարդերուն ականատեսս վկան եղած եմ : Սակայն երբէք չեմ տեսած և ոչ իսկ կրցած եմ երեակայել սարսափներ՝

որոնք Ատանայինն հետ բաղդատուէին : Այս նահանգին ջարդերը շատ ու շատ զլած անցած են այն բոլորը՝ ինչ որ Համիտեան վարչութիւնը այս տեսակին մէջ կազմակերպած է և ինչ որ իր բնութեամբ պիտի մընայ յաւիտենական ամօթ մը Օսմ. Պատմութեան :

Համիտեան ջարդերու մեծ մասը , այսպէս ըսուած , ունէին տեսակ մը կանոնաւոր կազմակերպութիւն . կը խնայուէր տղայոց , կիներուն , հիւանդներուն , և կողոպուտի , հրդեհումի և քանդումներու մասին տեսակ մը սեղմում կը դնէին : Ատանայի մէջ ողջ ողջ այրած են հիւանդները և վիրաւորները : Գիւղերու և շրջակայի ազարակներուն , Միսիսի և Համիտիէի գազաներուն՝ ինչպէս նաև Հասան Պէյլիի (Պաղչէի գաղա) մէջ , իւրեւ հարատւութիւն և կալուած այլևս ոչինչ կը մնայ . կիներէն և հինգ վեց տարեկան տղաքներէն շատեր վիրաւորուած են . անոնք մինչև և իսկ առաքկայ եղած են ամենազօպհի վարմունքներու : Թարաուսի մէջ լակցի վաթսուներ անցուկ երկու խեղճ պառաւներու գանգաւաները . անոնք կ'ողբային որ չէր յարգուած նոյնինքն իսլամական օրէնքը՝ որ կեանքը կը ճանչնայ իբր Աստուծոյ՝ պարգեւը , և կիներու պատիւը՝ փատիշաֆինը , այն աստիճան՝ որ մարդ ըլլալուս համար սարսափ կը զգայի :

Մեր անջեւ բերին 8-12 տարեկան բռնաբարուած 4 աղջնակներ , զանոնք , ի ներկայութեան Էսասա Րէուֆ պէյի (կառավարիչ Մերսինի) և ուրիշ պաշտօնատարներու՝ տարինք իսլամ դայեակի մը մօտ : Տեղեկագիրը ըստ պատշաճի խմբագրուելով պահուած է տեղական իշխանութեանց մօտ : Եղերեքուութեան բարբառնաբար ընդարձակութեանը և բոլոր զազրելի բարբարոսութեանը մօտին գաղափար մը կազմելու համար կը բաւէր տեսնել անթիւ վիրաւորեալները , մանաւանդ խեղճ

Վոքրիկները՝ ապաստանած Mme. Doughty Wylieի (կին անգլ. հիււարտոսին) հաստատած հիւանդանոցին մէջ. այս ազնիւ կինը, առաւօտէն մինչեւ իրիկուն, հիւանդապահուհիի մը պէս զանոնք կը խնամէր, ամէն գովեստէ վեր յարգանքով մը և արիւթիւնով մը :

Պրանսացի և գերման քոյրերն ալ անոնցմէ կը խոնամէին անջատօրէն :

Գերման հիւանդանոցի քոյր մը դէպքերու պատմութիւնները ընելու ժամանակ, եկաւ վայրկեան մը՝ սւր անկարող եղաւ զայն շարունակել. յետոյ, իր յուզումը անցնելէ վերջ, մեզի ըսաւ որ Արգարեան վարժարանին մէջ տեղաւորուած շարժելու անկարող 150 վիրաւորեալներ՝ շէնքին հրդեհումին ստեն ողջ ողջ այրուած էին : Ատիկա ամենէն կսկծալի մանրամասնութիւններէն մէկն է :

Շատ մարդիկ ևս մահը գտած են բոցերուն մէջ :

Սակայն որովհետեւ անկարելի է ամէն ինչ գրել, պիտի գոհանամ թուելով տակաւին 17 անձերու պարագան, — որոնց երկուքը ամերիկեան միախոնար և մէկը՝ բողոքական հովիւ, — անդէն, անպաշտպան և ոչ մէկ բանէ դանգատող, զորս այրած են Օսմանիէի հայ եկեղեցիին մէջ՝ եկեղեցական պաշտամունքի ժամանակ :

Համրտի վարչութեան օրով կիներու և տղայոց կը խնայէին և չէին յարձակեր ուրիշ ազգութեանց քրիստոնեաներուն, նոյնիսկ Հայ-կաթոլիկներուն և Հայ-Բողոքականներուն : Մինչդեռ Ատանայի քրիստոնեաներուն միջեւ ոչ մէկ խտրութիւն դրած են : Սուրիացիները (Սուրիանի-Քատիմ) և Սուրիացի կաթոլիկները (Սուրիանի-քաթոլիք), որ ըստ լեզուի և հանգամանքի հայերէն ոչինչ ունին, — վասնզի արաբերէն կը խօսին — ունեցած են, առաջինները՝ 400 զոհ և երկրորդները 65. Քաղզէացիները (Քիլտանի) ունեցած են 200. իսկ

Յոյները՝ հարիւրեակ մը Ատանայի քաղաքին և նոյն քան ալ նահանգին մէջ : Գալով Բողոքական-Հայերուն՝ անոնք ունեցած են 655 անձ սպաննուած , և Հայ-Կաթողիկները՝ 200 :

Ընդհանրապէս հաստատուած է որ ջարդերու վաղորդայնին միայն յանձնարարուած է Յոյները հանգիստ ձգել : Ո՛չ մէկ տեղ քրիստոնեայ տարր մը չէ յարգուած , ինչ որ ալ եղած ըլլայ :

Ատենագրութիւնով մը հաստատուած է որ , Էրզինի (Ճէպէլի Պէրէքէթի սանձագին գլխաւոր քաղաք) մէջ երբ բանոր պարպուեցաւ , բանաստիճայներուն մէջ գտնուող երկու Յոյներ սպաննուած են՝ նոյն իսկ տեղական իշխանութեանց ներկայութեանը :

Բոլոր այս փաստերը լայնօրէն կ'ապացուցանեն որ , Ատանայի ջարդերը՝ միմիայն Հայերու հանդէպ սարքուած շարժումի մը նկարագիրը չ'ունին , այլ շարժման մը քրիստոնեաներուն և ընդհանրապէս Սահմանադրութեան դէմ :

Բաց աստի , նախկին ջարդերու ընթացքին , կողուպուտը , և մանաւանդ տուներու և ինչքերու աւերումը , երբէք չեն ունեցած ա՛յնքան մուկնութիւն , և ո՛չ իսկ տեղի ունեցած են այնքան լայն աստիճանի մը վրայ՝ որքան հիմակուանը :

Մէկ բառով , բոլոր այս սարսափները կ'ապացուցանեն թէ կատաղի խելագարութեան մը ուրականք անցած էր այս գաւառին վրայէն : Այս վայրագութեանց արդիւնքը այն աստիճանի է որ , անով թաթախուած հողին կը քանդուի և դատելու կարողութիւնը կը կորսարնցնէ :

Ա.


Ձոհերու բիւր եւ նիւթական վնասներու
կարեւորութիւնը

Ձոհերու թիւի մասին հաստատած եմ որ կայ ան-
ուելի տարբերութիւն մը պաշտօնական թիւերուն և ու-
րիշներու կատարած հաշիւին միջև: Հայերը և օտար
թերթերու թղթակիցները համաձայն են ընդունելու
թիւ մը՝ որ կը յաճի 25 և 30 հազարի մէջ: Գալով կա-
ռավարութեան, նախ պաշտօնապէս ցոյց տուաւ իրը
1500 ոչ-իսլամ և 1900 իսլամ, իսկ այժմ՝ նոր քննու-
թիւններէ վերջ, անիկա կ'ընդունի 6000ի համադու-
նար թիւը:

Կառավարութեան թիւերը նմնուած են քաղա-
քային իշխանութեան տոմարներուն և կարգ մը վայ-
րերու մուխթարներուն և կրօնականներու տուած
ցուցակներուն վրայ: Հարկ չի կայ ըսելու որ քաղաքա-
յին իշխանութեան տոմարները չեն կրնար ներկայանայ
իրրև հաւատ ընծայուելիք ազրիւրներ, և խիստ բա-
ցայայտ է որ Ատանայի իշխանութիւնները ամէն տե-
սակ միջոցներու դիմնցին՝ քրիստոնեայ զոհերու իրա-
կան թիւը պահելու համար: Ատկէ զատ բազմաթիւ
վայրերու մէջ, նոյն ինքն քահանաները և մուխթար-
ները կը գտնուին սղաննուածներուն մէջ: Օրինակի
համար, Համիտիէի մէջ 7 հոգի յաջողած են պահուելու
տեղ մը գտնել, 8 հոգի ալ ապաստան փնտռած են M.
Sabatier կոչուած ֆրանսացիի մը գործարանին մէջ, և
բոլոր մնացեալը, — հաշուուած 2000 հոգի՝ օտար թղթ-
թակիցներէ, — ջարդուած են, մէջը բլլալով քահա-
նան և մուխթարը:

Պէտք է նկատի ունենալ որ՝ այդ եղանակին գոր-
ծաւորներու անազին թիւ մը եկած էր այս զաղային

1006
11588
831-97



մէջ, և որովհետեւ ասոնք չէին արձանագրուած, անկարելի է հաշուել անոնց ճշգրիտ թիւը :

Տայր երկինք որ հիւպատոսներու և թղթակիցներու հաշիւները չափազանցուած ըլլային :

Սակայն տրուած ըլլալով Ստանայի կարեւորութիւնը՝ անտեսական աեսակէտով, տրուած ըլլալով նաև որ ջարդերը աեղի ունեցած են աշխատանքի և առուտուրի ամենէն եռուղեւ շրջանին, Անատոլուի դանազան նահանգներէն՝ և նոյն իսկ Մուսուլի նման այնքան հեռու որ նահանգէ մը հասած գործաւորներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ : Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր Հայերէ՝ որոնց մեծագոյն մասը ջարդուած է :

Զիննի վաշա (դէպքերէն վերջ կարգուած վալի Ստանայի) տեսակցութեան մը միջոցին օր մը կ'ըսէր ինծի թէ՝ անկարելի էր ընդունիլ որ հայ զոհերու թիւը կարենար հասնիլ 15 հազարի, քանի որ պաշտօնական տոմարներու համաձայն, Ստանա քաղաքը 13 հազարէն աւելի Հայ չէր հաշուեր : Սակայն, Նորին Վսեմութիւնը, ինչպէս որ կ'երեւար, մոռցած էր որ, երբ իր գործունէութեան վրայ կը խօսէր, իբր յաջողութիւն կը նկատէր իրենց երկիրը ճամբած ըլլալը 10,000 հայ գործաւորներ՝ որոնք հասած էին ուրիշ վայրերէ և բանակած՝ կայարանին մօտ վրաններու տակ կամ բացօթեայ : Երբոր այս կէտը յիշեցուցի իրեն, Նորին Վսեմութիւնը ստիպուեցաւ լռել : Կրնա՞ր այլ կերպ շարժիլ՝ իր պարծած յաջողութիւնը առանց կասկածի տակ թողելու :

Ենթադրինք որ այս խեղճ մարդոց կէսը գտնուելով հոս հոն, քաղաքէն դուրս, առանց ղէնքի, կրցած է կեանքը ազատել, անշուշտ միւս կէտը կորսուած է առանց հետք մը ձգելու որևէ պաշտօնական տոմարի մէջ :

Մնաց որ, ես քաղուած մը պիտի տամ Ներքին
Գործոց Նախարարութեան ուղղուած հաւաքական տե-
ղեկագրէ մը՝ ստորագրուած Բ. Դրան պատուիրակ Յա-
յիգ պէյի և Մոստիշեան էֆ.ի, ինչպէս նաև Մէրսինի
կառավարիչ էսաա Րէուֆ պէյի կողմէ .

«Անանայի վիլայէթին ցաւայի դեպքերու ընթացքին
«սպաննուած անձերու քիւն է, քաղաքային իշխանու-
թեանց տնարներու համաձայն՝ 5683 — մէջը հաշուե-
«լով զինուորները եւ ոստիկան զինուորները — որոնց
«1487ը իսլամ եւ 4196ը ոչ-իսլամ: Սակայն որովհետեւ
«հաւանական է որ ըլլար առժամապէս այս տեղերը
«հաստատուած եւ չարձանագրուած անձերու մեծ քիւ մը,
«հաւասարապէս մեռան. եւ որովհետեւ այժմ կարելի չէ
«այս անհասներու քիւր նշել, կը կարծենք որ սպան-
«ներուներու ընդհանուր քիւր պիտի ըլլայ, իսլամ եւ
«ոչ-իսլամ, մօտաւորապէս 15000 նոցի: Սիեւնոյն տեհն
«պէտք չէ մոռնալ որ 30,000 անձեր, պատանի եւ տղայ,
«կը մնան առանց ապաստանի եւ առանց ոչ մէկ
«նիւթական միջոցներու»:

Կը կրկնեմ, տա՛յր Աստուած, որ այս պարտններն
ալ խաբուած ըլլային զոհերու թիւին վերաբերմամբ:
Բայց շատ կը վախնամ որ այսպէս եղած ըլլաւ:

Սըղարեւ, պէտք է երեւակայել որ Հոճընի մէջ
իսկ, ուր Չարդ տեղի չունեցաւ, — թէ եւ Հայերը հոն
15 օր պաշարուած մնացին —, ցարդ ճշգրիտ լուր
չէ առնուած 3000 Հայերու մասին՝ որոնք Ստանայի
Նահանգին մէջ կը գտնուէին: Հոճըն ըլլալով լեռնային
և անբերրի քաղաք մը, իր բնակիչները ստիպուած են
այլուր երթալ՝ օրապահիկ ճարելու համար:

Անհերքելի է. որ ոչ-քնիկ զոհերու թիւը մեծ է .
քայց առնուազն մէկ տարի պէտք է կարենալ հասկնա-
լու համար ճիշտ թիւը այն անձերուն՝ որոնց ճակատա-

գիրը անձանօթ կը մնայ, վասնդի այս թիւը իւրաքանչիւր վիլայէթի տուած պաշտօնական տեղեկութիւններու վրայ միայն կրնայ հիմնուիլ :

Ամէն պարագայի տակ պէտք է ընդունիլ որ Ստանայի և շրջակայից մէջ բնակող օտարահպատակ գաղթականութեանց երեւելիները կրնան հաշուել աւելի պազարիւնով, մանաւանդ օտար թղթակիցները՝ որոնք կրնային ամէն տեղեր ազատօրէն մուտք գործել իրենց հետախուզութեանց համար : Հետեւաբար, սպասելով որ ճիշտ թիւերը ստուգուին իւրաքանչիւր վիլայէթի մէջ, իմ կարծիքով, այժմուս զոհերու ամենէն հաւանական թիւն է օտարներու ցոյց տուածը՝ որ 20 հազարէն վար չէ :

Ինչ կը վերաբերի նիւթական կորուսաներուն, բաւական է ինձ ըսել որ Ստանայի նահանգը, կայսրութեան ամենէն բարգաւաճ և ամենէն հարուստներէն մին, այսօր միմիայն աւերակներու կոյտ մըն է՝ տիրատեսիլ և լուին :

Զրհնի փաշայի համաձայն, Ստանա քաղաքին մէջ հրդեհուած և քանդուած շէնքերը, ըստ քանակութեան, կը ներկայացնեն ամբողջութեան մէկ հինգերորդը, և ըստ արժէքին՝ մէկ երրորդը :

Պատկանեալ վարչութեան տուիքերուն համաձայն, հրդեհուած կալուածներու համազումար արժէքը կը ներկայացնէ մօտաւորապէս 96,000 օսմ. ոսկի : Իմ կարծիքով, աջ կողմէն գէրջի մը յաւելումովն իսկ այս գումարը անբաւական պիտի ըլլար, վասն զի Սուրիացի երեւելի մը, Էլլաս Թիւրքմանի, տեսած է անէացումը իր անշարժ կալուածներուն՝ 30,000 ոսկի արժէքով, գումար մը որ հիմնուած է վերոյիշեալ վարչութեան պաշտօնական թիւերուն վրայ : Պաղչէի մէջ ուր ամէն կարելի խնայողութիւններով ուղուած է շի-

նել տնակներ՝ ուր հազիւ կարելի է պատասպարուիլ միջնովորտի խստութիւններէն, հաստատուած է որ իւրաքանչիւրին համար պէտք էր ծախսել նուազագոյն 25 ոսկի: Արդ, բացայայտ է որ յարաբերօրէն ճիշտ թիւ մը ունենալու համար պէտք է ընդունիլ 50 ոսկիի նուազագոյն և 500 ոսկիի առաւելագոյն չափ մը՝ իւրաքանչիւր այրած շէնքի համար, ինչ որ ցոյց պիտի տար պաշտօնական գնահատումներու իսկական արժէքը:

Հաւասարապէս օգտակար է յիշել որ Ատանայի մէջ ապահովագրական ընկերութեանց հատուցանելի փնաններու գումարը կը հասնի 750,000 ոսկիի: Աւելորդ փաստ մը ևս՝ պաշտօնական թիւերու արժէքը [ցոյց տուող]:

Հարկադրուած եմ եզրակացնել որ նիւթական կորուստներու ընդհանուր գումարը, անշարժ և շարժուն կալուածներով, 3 միլիոն օսմ. ոսկիէն [պակաս պէտք չէ ըլլայ:

Բ.

Խռովութեանց պատճառները. — Ինչպէ՞ս սկսան եւ իրենց ընթացքը շարունակեցին

Պոլսոյ մէջ Մարտ 31ի հակայեղափոխական շարժումը սկսելուն հետ միասին, միեւնոյն օրուան ցորեկէն վերջ, անմիջապէս որ հեռագիրը արձագանգը տուաւ այն դէպքերուն՝ որոնց մայրաքաղաքը թատր հանդիսացած էր, Ատանայի մէջ խռովութիւնները պայթեցան:

Յաջորդ օրը, չորեքշաբթի, այս խռովութիւնները կը փոխուէին ջարդերու՝ որոնք տեւեցին երեք օր և վերջացան Ապրիլ 3ին:

Յետոյ, Բաւնէլիէն եկած վաշտերուն հասած իրի-

կուենն իսկ (Կիրակի, 12 Ապրիլ), անոնք կը վերսկսէին մինչև երեքշաբթի վերջ գտնելով :

Այս անխմատ մոլեգնութեան իմաստը բաւարար կերպով հասկնալու համար, անհրաժեշտ է քիչ մը յետ երթալ, երթալ նոյն իսկ մինչև Սահմանադրութեան վաղորդայնը :

Սահմանադրական վարչութեան վերահաստատումը գէշ կերպով կը պատշաճէր շահերուն այս երեւելիներուն՝ որոնց հին վարչութիւնը ապօրէն հեղինակութիւն մը կ'ապահովէր : Ուրեմն ինքնաբերաբար այդ երեւելիները կը սնուցանէին ամենամեծ մախանք մը նոր վարչութեան դէմ, և, շատ բնականօրէն, ընդլէմ Հայերուն՝ որոնք պատրաստ էին իրենց արիւնը թափելու՝ այդ Սահմանադրութիւնը պահպանելու համար : Այսպէս, այդ մարդերը մտածեցին որ՝ նոր ըէժիմին դէմ յաջողութեամբ յարձակելու համար նախ պէտք էր Հայերը բնաջնջել : Ամբոխին տգիտութենէն և միամտութենէն օգտուելով, ամէն կողմ Հայերու դէմ ատրաձայնեցին զրպարտութիւններ — զրպարտութիւններ որոնք ժողովուրդի ամենէն փախուկ զգացումները վիրաւորելու բնոյթն ունէին :

Ստիկա չէր ամէնը :

Մերթ կ'ըսուէր թէ Հայերը կը զինուէին իսլամները ջարդելու և անոնց կիները առեւանդելու նպատակով : մերթ սուտ գրոյցներ կը հանէին՝ որոնց համեմատ Հայերը իբրև թէ մեղանշած ըլլան իսլամական կրօնքին դէմ և անարգած՝ բարեպաշտական հաստատութիւնները :

Այսօր ստուգուած է որ իսլամ բնակչութիւնը գրեթէ չուրէր ձգտող այս սուտերը տարածուած էին ամբողջ Անատոլուի մէջ : Հին վարչութեան օրով ջարդեր տեսած նահանգներու կարգ մը երեսփոխաններ մեզի կը

պատմեն թէ այն տակնուայ կարգախօսը կուզար մայրաքաղաքէն, պաշտօնական գեկուղի ձևուով, ծանուցանելով հաւանական ժամանումը յեղափոխականներու, որոնք իբրև թէ կտաւարութեան և խլամական իրաւունքներու վրայ յարձակելու նպատակ ունէին՝ և կը յանձնարարէին խլամ բնակչութիւնը տեղեակ պահել այս իրողութիւններուն:

Յամաքի ճամբով մեկնած ըլլալով՝ գիշեր մը Քոնիայի մէջ անցուցինք: Վիլայէթի թահրիբաթ միւտիբին և ոտական-զօրաց հրամանատարը կայարանը գմեղ դիմաւորած էին՝ վայրին անտնով մեզի բարի եկ ժաղութելու համար: Այս էֆէնտիները խօսակցութեան ընթացքին մեզի ազդեկացուցին թէ միեւնոյն օրը այդ քաղաքին մէջ որչա՛հ փոփոխութեան նշաններ կը տեսնուէին, խլամները շուկայ եկած էին՝ ցալախ գինւում, Հայերը ազատամնած էին իրենց տուները և կամ իսլամ բարեկամներու մօտ, բարեբախտաբար շուտ գիտցում էր որ այս շարժումին պատճառ սուտ լուր մըն էր ու այսպէսով խռովութիւններէ խուսափած էին: Անմիջապէս վայրին մօտ գացինք այս դէպքին նկարագիրը հասկնալու համար:

Անա՛ թէ ի՛նչ էր խնդիրին էութիւնը:

Նախընթաց օր Պօղ-Քրրի (Քոնիայի գաղա) գայմապամէն հեռագիր մը հասած էս որ կը հազարդէր չրջող գրույ մը՝ որուն համաձայն 50) Հայեր գաղային մէջ մտած՝ սկսած էին հրդեհել և ուտել գիւղերը, և թէ խլամ բնակչութիւնը գերազրգօսելով, բէտիֆներու միտերանոցին մէջ գտնուած գէնքերը աւարի տուած էր: Հեռագիրը կ'աւելցնէր թէ, գինուորական ուժի մը չգոյութեան պատճառով, աղական իշխանութիւնները խլամ բնակչութիւնը կը գրկէին չրջակայ գլխաւոր դիրքերուն վրայ՝ մինչև որ հասնէին գայմապամին պահանջած օգնութիւնները:

Այս հեռագրին հասնելուն վրայ, բէտիֆներու տեղական վաչար. դէնքի տակ կանչուած և հապճեպով զրկուած էր, հանգստեան կոչուած տարիքոտ սպայի մը հրամատարութեան տակ: Սակաւն վերջ ի վերջոյ հասկցած էին այս 5000 հայերու առատակէին էութիւնը: Խնդիրը կը յանդէր յիսնակ մը գնչուներու վերայ, որոնք հոնկէ կ'անցնէին, ինչպէս ամէն տարի սովորաբար: Ահաւասիկ պատճառը բոլոր այս վրվուկներուն . . . :

Փայմագամին հեռագիրը տեղի տուած էր զօրակոչի մը և Փոնիայի իսլամներուն միջև գրգռութեան մը՝ Հայերուն դէմ:

Բռնապետութեան ուրիշ կուսակիցներ, ինչպէս Հաճընի միւֆթին և իր զաւակները Ահմէտ, Ճէվաթ և Իզդէթ էֆէնտիները, հարցաքննիչ-դատաւորի փոխանորդ Սապրի էֆէնտի, և Փօլանի (Սիւ) նախադատ ատենի անդամ Հիւսէյին էֆէնտի՝ սանձարձակ կ'երթով դէմ յայտարարուած են Սանձանագրութեան և Հաւասարութեան դէմ, և բացայայտօրէն ժողովուրդը զըրդած են քեաֆիրները սպաննել և իրենց ինչքերուն տիրանալ: Այս դէպքը ազդեցուած է Ատանայի պատժական դատարանը դանուած թուռցիկ-կոչերով:

Հրապարակաւ միւլենոյն ուղղութեամբ պրոպականտ մը եղած է Պաղչէի նախորդ միւտիրին կողմէ:

Բացայայտ է որ այս արուեստական գրգռութիւնները հոս ու հոն տեղի տուած են հայկական ջարդերու սկզբնաւորութեանց: Որինակ, Էջճար-Ուշաղբի մէջ սպաննուած են Հաճընցի երեք Հայեր. Քարսի բուած ուրիշ գիւղի մը մէջ ուրիշ երկու Հայեր սպաննուած են, յետոյ յօշոտուած և այրուած:

Այս ոճիրներու հեղինակները սուանց այլեւայլի իրենց արարքը խոստովանած են իբր պատճառ ցոյց

տալով վերոյիշեալ գրգռութիւնները : Հակառակ ասոր, ասանք, հիւանդութեան կեղծ պատրուակին ասկ — իրականութեան մէջ անոնց փախուստը դիւրացնելու համար — Ատանայի հիւանդանոցը փոխադրուած են :

Վարուելու այս եղանակը քաջալերութիւն մըն էր բոլոր եղեւնագործներուն :

Ատանա քաղաքին մէջ, միապետութեան կուսասակիցները ամէն յերկրածոյ միջոցներու գիմեցին՝ իսլամներու կարծիքը Հայերուն դէմ հանելու համար : Ժողովուրդէն մէկ մասին կ'ըսէին թէ այգիներուն մէջ Հայ մը մեղապարտ յարարութիւններ ունեցած էր իսլամ կիներու հետ . թէ այն հայ երիտասարդը, որ իսլամ մը սպաննած է ուրիշ մը վիրաւորած էր իր պատիւը պաշտպանելուն համար, Հայ թաղին մէջ պահուած կը մնար . թէ Հայերը մեծ քանակութեամբ գէնքեր գնած էին և կը պատրաստուէին յարձակիլ Իսլամներու վրայ : Աւելի վար խաւերու և շարագործութեանց ընդունակ տարրերու կ'ըսուէր թէ պէտք էր շարգել քեաֆիրները՝ անոնց ինչքերուն տիրանալու համար . թէ Սահմանադրութիւնը, իսլամին օրէններուն հակառակ հռչակուած էր՝ սպանովելու համար քրիստոնեաներու՝ մասնաւորաբար Հայերու շահերը :

Ջարդերէն քանի մը օր առաջ, Իքիսալ թերթին խմբագրութեան կողմէ կազմակերպուած միթինկի մը մէջ, բոլոր իսլամ գասակարգերը — պաշտօնեայ, կրօնական, զինուոր և զործաւոր — կ'աշխատին զանգուածային յարձակման մը պատրաստուելու համար : Վալին կը հաւատատէ որ գէնքերու միթերանոցը կողոպտուեցաւ այս գերագրգռուած ամբոխին կողմէ : Սակայն տրուած ըլլալով որ միթերանոցը պահպանուած էր պահակախումբի մը կողմէ, և թէ այս պահակները, ո'վ որ ալ ըլլար, առանց զիմադրութեան մասնելու պիտի չթողէ-

ին . թէ ապացուցուած չէ որ պահակներուն և ժողովուրդին միջև քսիտում մը տեղի ունեցած ըլլայ . թէ միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մէջ՝ ուր այս պատճառներով Չարդեր տեղի ունեցած են , կասկած չի թողուր որ զէնքերը բաշխուած են կառավարական հրամանով :

Երկու հայ երեւելիներ սպաննուած են , միննոյնինքն վալիին աչքին տակ , միւսը այն տեսակ վայրի մը մէջ՝ ուր գացած էր վերջնոյս կողմէ իրեն վտահոտած պաշտօն մը կատարելու համար : Կառավարութիւնը , ոչ միայն ոճրագործները չի ձերբակալեց՝ այլ անտեցմով անգամ չի շահագրգռուեցաւ : Այս քննարկը կը ձգտէր ոճրագործները քաջալերելու , գանձք ամէն տեսակ գրգռութիւններու մղելու և հրահրելու անոնց յոսի բնագոյները : Ժամը Բիւ բոլոր կառավարական պաշտօնեաները , երեւելիները , ինչպէս նաեւ խուժանը հաւաքուած էին՝ ամէնքը կրելով փաթիւն : Ասոր վրայ Հայերը , որ առաւօտէն ի վեր իրենց գործերով գրաւած էին , ստիպուած են իրենց վաճառատունները գոցել և ապաստանիլ իրենց տուները : Ասիկա բացարձակապէս անհերքելի ապացոյց մըն էր թէ իրենք չէին կրնար ոչ մէկ յարձակողական միտում ունենալ :

Անատօլուի Չարդերուն ժամանակ , մաքրը խաղաղեցնելու պատրուակին տակ , կը ստիպէին Հայերը որպէսզի տուներէն դուրս ելլին և խանութները վերաբանան . իրականութեան մէջ նպատակին էր գրկել զանոնք ամէն ինքնապաշտպանական միջոցէ և խլամներու կողմէ անտեց բնաջնջումը դիւրացնել : Ատանայի վալին գիտած է միեւնոյն միջոցին : Այնպէս որ Չարդը և կողոպուտը մեթոտիկ կերպով սկսուած է խողխողումովը Հայերուն , որոնք վալիին պնդումներուն տեղի տալով , կը գտնուէին փողոցներուն կամ իրենց վաճա-

ուսուսաններուն մէջ : Յետոյ ամբողջ յարձակած է Հայ
Թաղին վրայ՝ սպաննելու համար բոլոր անոնք որ տուն
ապաստանած կամ հոնկէ բնաւ դուրս չէին ելած : Այն
ատեն է միայն որ Հայերը գտնուելով օրինաւ որ ինքնա-
պաշտպանութեան մը հարկին ասկէ, զինուած դիմա-
գրութիւն մը ցոյց տուած են, ուրկէց պատահած են
երկուստեք կորուսաներ : Սահայն, որովհետեւ ո՛չ մէկ
Հայ երբէք չէ յարձակած իսլամ Թաղին վրայ, և որ
բոլոր իսլամ սպաննուածները գտնուած են Հայ Թաղին
կամ ստոր մօտակայ գիւրքերու վրայ, բացարձակօրէն
անկարելի է պնդել որ Հայերու ձեռք տուած միջոցը
պաշտպանողական և թուրքերունը յասկայէս պատ-
րաստուած յարձակողական չբլլայ :

Խնովութիւնները այսպէս իրենց ընթացքը շարու-
նակեցին մինչև 4 Ապրիլ :

Օսման Էֆէնտի անունով իսլամի մը ընտանիքը
կը բնակէր Հայոց Թաղին մէջ : Այս ընտանիքը ոչ մի-
այն ոչ որ չի խորհեցաւ նեղել, այլ ընդհակառակը,
ամէն վտանգէ ապահով ակզ մը դրին դայն : Եմանա-
պէս Հաճընի և Չորքմարդուանի (Տէօթ-Սօլ) մէջ դըտ-
նուող իսլամ ընտանիքներ, հեռի ամենափոքր մտահո-
գութեան մը ենթարկուելէ. Հայերու կողմէ ամէն
կարգի հոգածութեան առարկայ եղան :

Ահա տակ դարձեալ նիւթական և շօշափելի սպա-
ցոյց մը որ Հայերը՝ Իսլամներ կոտորելու վաս մաս-
գրութիւնը չեն ունեցած երբէք :

Կուսակալ Ճէվան օլէյ, Ներքին Գործոց Նախարա-
րութեան ուղղուած ակզիկագրով մը կը պնդէ որ իրեն
անկարելի եղած էր կարգը պահպանել զինուորական
միակ ջոկատով մը ընդդէմ չարագործներու և մարդաս-
պաններու՝ որոնք ոչ մէկ բանի կ'ուզէին ականջ դնել :

Սակայն Ապրիլ 4ին, Հայոց Թաղը բնակող վերո-

յիշեալ Օսման էֆէնտի միջոցաւ Հայերը նամակ մը ուղղ'ցին կառավարութեան, ուր կը կրկնէին այն հաւաստիքը թէ իրենք երբէք գէշ ղետուճներ ունեցած չեն: Արդ, այս գրութեանն անմիջապէս վերջ տրուած կառավարական միակ հրաման մը բաւական եղաւ յարձակումը դադրեցնելու: Գարնաւ այս պարագան յայտնի փաստ մըն է որ՝ կոստանտնուսը պատրաստուած եւ կազմակերպուած հին սեղանիան իշխանութեանց գիտակցութեամբ եւ հրահանով:

Ապրիլ 12ին սկսուած ջարդը, ինչպէս Ապրիլ 1ինը, վերադրուած էին ծիծաղելի կերպով յարմարշուած արտաոց պատճառի մը, որպէսզի ատով պատասխանատուութիւնը ձգեն Հայերուն վրայ:

Ճէվան պէյ, իր տեղեկագրին մէջ, կ'ուզէ հաւատալ եւ հաւատացնել որ Հայոց թաղէն զինուորական ջոկատներու վրայ կրակուած ըլլալով, վերջիններք յարձակած են այդ թաղին վրայ: Իսկ հրդեհումներու եւ աւտրառութիւններու վրայէն լուծեամբ կ'անցնի:

Սակայն քննութիւնը ցոյց տուաւ որ՝ ո՛չ թէ միայն նիւթապէս անկարելի էր Հայոց թաղէն կրակել զինուորական բանակատեղիին վրայ, այլ նաեւ այն տունը, ուրկէ կը պնդուէր թէ հրացան պարպուած է, իսլամէ մը բնակուած էր: Խնդիրը կը կայանար ուրեմն կարգ մը իսլամներու խառնակչութեան վրայ, այդպէսով զինուորները Հայոց դէմ գրգռելու համար:

Յարգելի երեսփոխանները անշուշտ կը յիշեն որ Մարտ 31ի շարժման ժամանակ, յեւադիմական մը — թերեւս Շէյխ Վահաէթի — երեսփոխանական ժողովէն հրացան պարպեց Այա-Սօֆիայի հրապարակը բանակած զինուորներու վրայ՝ որոնք փոխադարձեցին:

Այս միջոցը, — որուն նպատակն էր երեսփոխաններու կոտորածը կառաջացնել — ինչպէս կը տեսնուի օ

ճիշտ ու ճիշտ այն միջոցն է որ գործադրուեցաւ Սասնայի մէջ : Երկու շարժումներու նմանութիւնը աչքառու է :

Յարգելի ինկերս Եուսուֆ Քէմալ պէյ կը գրէ . . . Թէպէտ հրացան նետուած վայրերու մօտակաները կարգ մը հայոց տուններ կային . . . : Ատով կարծեաքոյրորովին չի մերժեր այն կարելիութիւնը թէ՛ հրացանաձգութիւնը հայերու կողմէ կատարուած ըլլար : Սակայն , իմ հասկացողութեամբս , այս մասին ամենափոքր կասկած մը ներելի չէ , նկատելով որ իրենց սեփական թաղէն դուրս բնակող բոլոր հայերը Սպրիլ 4ին սպանուած էին , այնպէս որ 12ին — թուական երկրորդ կոտորածին — այդ շրջանակներու մէջ ոչ մէկ հայ մընացած էր : Ուստի , զինուորներու վրայ կատարուած հրացանաձգութիւնը խլամի մը կողմէ միայն կրնար տեղի ունենալ :

Անկարելի է բուական խուժովն բացատրութիւններ գտնել՝ նկարագրելու համար սարսափը և վայրագութիւնը այս երկրորդ կոտորածին՝ որ տեւած է երկուօր :

Այս սպանդի միջոցին էր որ ողջ ողջ այրած ևն հիւսնդները և այն վիրաւորները՝ որոնք հասած էին շրջակայ ազարակներէն և զիւղերէն և կամ կը դաւնուէին դպրոցական շէնյին մէջ :

Ծէվատ պէյ իր անդեկագրին մէջ աւելորդ համարած է խօսիլ այն սարսափելի մահացումին՝ մասին՝ որուն այդ դժբաղդները և թարկուեցան բոցերուն մէջ . բառ մը չըսեր փորերնին պատռուած յղի կիներու , խողխողուած մանուկներու և ուրիշ հազար տեսիլի անանուն վայրագութիւններուն վրայով : Քայց չէ մոռցած խնամով նօթագրելու որ Հայոց թաղին հրդեհումին միջոցին մեծ քանակութեամբ ռուսերը և ուսանակներ պայթած ևն : Այս դրսւարտութեան լուադոյն հերքումը

կուտայ այն պարագան որ, Հայերը, իրենց ինքնապաշտպանութեան միջոցին, ուռմբեր կամ ուժանակներ չեն գործածած: Իրենց պաշտպանութիւնը կատարած են հասարակ զէնքերով, այնպէս որ բացայայտ է որ եթէ տէր եղած ըլլային նմանօրինակ միջոցներու՝ կրնային զանոնք դիւրութեամբ գործածել և անոնց արդիւնքը կարելի էր շատ դիւրութեամբ ճանչնալ: Նրմանօրինակ պայթուցիկներու ամենափոքր մէկ հեռքին անգամ չենք պատահած, որպէսզի կարողանայինք անոնց գործածութիւնը ենթադրել, ուստի և շատ բընական է թէ ատիկա յայտնի շարախօսութիւն մըն է՝ որուն նպատակն է Հայերու վրայ ձգել զէնքերու պատասխանատուութիւնը:

Գալով այն թնդանօթ կոչուածներուն, որոնք իբրեւ թէ խողովութեանց միջոցին Ստանայի շրջակայքը գտնուած են, ատոնք երկու հատ ջուրի խողովակներ էին՝ փայտով շրջապատուած և վառօդով լեցուած: Նաճար օղլու գիւղին Հայերը զայն պատրաստած էին գործածելու համար՝ շունենալով ուրիշ պաշտպանութեան միջոցներ. ու ատիկա անգամ մը ևս կուգայ ապացուցանելու որ այդ կողմերու Հայերը ապստամբութեան գաղափարներ սնուցանելէ շատ հետի էին:

Բոլոր այս մանրամասնութիւնները վճռականօրէն կ'ապացուցանեն իրողութիւն մը, այսինքն այն թէ՛ Ստանայի մէջ կառուվարական պաշտօնեաները և անոնց արբանեակները կանխահոգ կարգադրութեամբ պատրաստած են այնպիսի պարագաներ, որ իրենց մտածումով՝ իրենց վրայ ինկած պատասխանատուութիւնը պիտի կարենային նուազեցնել այն ջարդերուն մէջ՝ զոր իրենք իսկ ծրարեցին և որոշեցին, չգէթ պաշտօնապէս, այդ պատասխանատուութիւնը նետել Հայերուն վրայ: Այս նպատակին հասնելու և Իսլամներու վայրագ մո-

չեզնութիւնը արդարացնելու համար, զիմեցին ամէն ահեսակ սուտերու և զինուորներու բանակատեղիին վրայ կրակելու զազրելի միջոցին :

Ճէվատ պէյ կ'աւելցնէ թէ Հայերը բազմաթիւ զէնքեր գնած են և թէ մէկ քանի: ամսուան միջոցին Ստանա ներմուծուած են 12,000 կտոր հրացաններ :

Ճիշտ է որ Հայերը զէնքեր գնած են : Սակայն ներածուած բոլոր մթերքը Հայերու կողմէ չէ գնուած : Ընդհակառակը, — ինչպէս արդէն ամէն ահա — այս զէնքերուն մեծագոյն մասը առնուած է Իսլամներու կողմէ :

Հոս հարցում մը կը ցոուի :

Հայերը իրաւունք ունին զէնքեր գնելու :

Իմ կարծիքով, այս խնդիրը գլխաւոր կարեւորութիւն մը ունի Ստանայի դէպքերուն լուծման համար, և կ'արժէ որ ատոր պատասխանինք ամէն բանէ առաջ :

Կը կարծեմ թէ անկարելի է Հայերուն զլանալ բոլոր օսմանցիներուն հասարակաց եղող իրաւունք մը : Եւ Հայերը նոյն իսկ ամէն ժամանակ — և մինչեւ ցարդ — նշաւակ եղած ըլլալով ամէն տեսակ յարձակումներու, կեղեքումներու և կոտորածներու, կայսրութեան միւս տարրերէն աւելի իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար զինուելու հարկին տակ կը գըտնուին : Կառավարութիւնը Հայերը այն պարագային միայն պէտք էր արդիւի, երբ առանց բացառութեան բոլոր օսմանցիներու զէնք կրելու արածութիւնը վերջնէր և զանոնք կասարեղապես զինարարի ընկեր : Բայց մերժել այս իրաւունքը ցեղի մը՝ որ զէնքին կը զիմէ մի միայն ինքնապաշտպանութեան համար, մինչդեռ զայն կ'արածեն յարձակող տարրերու — ինչ որ են

նաև ներկայ բոսփիս — պարզապէս պիտի նշանակէր Իսլամներու կողմէ ոչխարներու պէս բնաջնջման դատապարտել զանոնք: Ոչ մէկ օսմանցի պիտի ընդունէր այդ կարգի անարդարութիւն մը:

Հետեւաբար երբ Հայերուն, ուրիշ տարրերու օրինակին վրայ, զինուած ըլլալը նկատուի խռովութեան կամ ապստամբութեան նշան մը, կարելի չէ ընել այդ առանց արդարութիւնը և ողջմտութիւնը բռնաբարելու: Եւ հարկադրուած ենք ընդունելու որ, Ատանայի դէպքերը այնպէս էին որ Հայերը չէին կրնար չի հալատակիլ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեան հրամայական սահանջին:

Անկասկած պիտի դայ օր մը՝ ուր սահմանադրական կառավարութիւնը յարգել պիտի տայ իր իշխանութիւնը հանդէպ թալանիչներուն և ոճրագործներուն և պիտի զինաթափ ընէ բոլոր Օսմանցիները: Այն առեւն ոչ ոք հարկ պիտի սեռնէ մտածելու ինքնապաշտպանութեան վրայ: Սակայն համոզուած եմ որ, մինչև այդ, երջանիկ օրուան ժամանումը, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ մէկ խիզճ պիտի կրնար մեղադրել Հայերը՝ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար:

Այս չէ բոլորը:

Ամբողջ աշխարհ համաձայն է որ բացարձակ միապետութեան մը վերադարձի վտանգները դեռ կատարելապէս հեռացուած չեն: Հետեւաբար, ամէն օսմանցի, պարտաւոր է արթուն մնալ նման հաւանականութեան մը հանդէպ, և հակառակ պարագային, Սահմանադրութիւնը պաշտպանել զէնքով:

Ընդհանուրին ծանօթ է որ երկու հայ կուսակցութիւնները, Դաշնակցութիւն և Հեչակ, հաւասար Իրքիմար և Թերազգրի, իրենց բոլոր ջանքերը կեղբրնացուցած են այս նուիրական պարտքին կատարման:

Մարտ 31ի պատահարներու ատեն Պոլսոյ մէջ Հայերը պատրաստ էին իրենց կեանքին գինովը պաշտպանելու Սահմանադրութիւնը : Ատանայի , ինչպէս ամբողջ կայսրութեան մէջ , Հայերու ընթացքը միեւնոյնը եղած է : Ինչպէս — առ ի չգոյէ ապացոյցի — կարելի չէ եղած գտնել փաստ մը՝ որ կարենար ենթադրել տալ թէ Հայերը կը սնուցանէին հայրենասիրական զգացումներու հակառակ դադափար մը , այսինքն անջատողականութիւն . բան մը որ , մանաւանդ հրապարակաւ դնուած զէնքեր՝ շէին կրնար վերագրուիլ յետին նպատակներու : Եթէ Հայերը Օսմ. Հայրենիքին հանդէպ դէշ դիտումներ սնուցած ըլլային , անոնք , Պոլսոյ դէպքերու ընթացքին , չպիտի նուիրուէին այնքան կատարելալ անձնուրացութեամբ և վեհանձնութեամբ՝ Սահմանադրութեան պաշտպանութեան և կարգի պահպանութեան համար , հակառակ այն մուրգին վիշտին՝ զոր Ատանայի դէպքերը արթնցուցած էին անոնց սրբոտին մէջ :

Կը կարծեմ թէ ամէն անկողնակալ Օսմանցի զայրոյթ պէտք է զգայ Հայերու ցոյց տուած ուղիղ և օրինաւոր վարմունքին ի վնաս՝ անոնց հանդէպ նետուած դարշակի դրպարտութիւններէն :

Օսմանիէ , Համիտիէ , Թարսուս , Չորք-Մարզուան , Հաճըն և այլուր , դէպքերը պատահած են — համեմատութիւնները պահելով—միեւնոյն եղանակաւ : Յերիւրածոյ սուտերը և Հայերու վերագրուած արուեստական խռովութիւնները և յարձակմանց կեղծ իրարանցումները՝ միևնոյն վաճառանիշը կրող ապրանքներ էին :

Օրինակի համար , Ս.սաֆ պէյ , Ճէպէլի-Պէրէքէթի կտուավարիչը , Ապրիլ 2ին հեռագրած է կուսակալութեան և Օսմանիէի գայմադամութեան թէ՛ անհիմն է Չորք-

Մարզուանի Հայերուն վերագրուած յարձակումը, և թէ ընդհակառակը, այս վերջինները օգնութիւն կը խնդրէին: Միեւնոյն օրը կուսակալութեան կը հեռագրէ նաև որ Թաճիրլիի աշիրէթը — որ Օսմանիէի մէջ աւերումներու սկսած էր — յարձակած էր Չորք-Մարզուանի վրայ: Օսմանիէէն, Համիտիյէէն, շրջակայ ուրիշ գիւղերէ ստացուած հեռագիրներ կը ծանուցանէին թէ ամէն տեղ՝ Ասանայէն խմբովին հասնող բնիկ կամ եկեւոր Իսլամներն էին որ սծիրներ կը գործէին և հանրային կարգը կը խանգարէին:

Հակառակ ասոր, միևնոյն Ասաֆ պէյր, Ապրիլ Յիւն կը հեռագրէ Ներսիս Գործոց Նախարարութեան թե՛ Հասան-Պէյրի և Չէյրուսի փեսայիները հաւաքուած են սակեազը քարոսանոց ընկրու համար և շատ հաւանաբար պիտի գան միևնոյն Ասանա: Ապրիլ 4ին, հեռագրաւ հրահանգ կ'ուզէ Նախարարութիւնէն և կուսակալութիւնէն՝ Փափագ-Քալէի 400 բանտարկեալները ազատ արձակելու, անոնցմով կազմելու համար վաշտ մը և զանոնք զինել հրացաններով և ռազմանիւթերով՝ զորս կը պահանջէ Իսկէնտէրունէն: Իր ծրագիրը կը գործադրէ. կ'արձակէ բանտարկեալները, կը զինէ և զանոնք կը մղէ Հայերուն դէմ:

Ինչպէս բացատրել շարժելու այս եղանակը և ինչո՞վ որակել զայն:

Ասաֆ պէյ կ'ուզէ հաւատացնել որ Համիտիէի կոտորածը սկսած է՝ այդ քաղաքին քահանային կողմէ Արսլան պէյի վրայ պարպուած ատրճանակի հարուածէ մը: Սակայն ապացուցուած է որ յիշեալ քահանան հողի մը գնման համար վճարած էր 40 ոսկի և կառավարատուն գացած էր՝ իր գնած հողին պաշտօնական մուրհակները ստանալու համար: Ուստի, ողջմատութեան հակառակ է ընդունիլ որ մի միայնակ կառավարատուն

եկած անձ մը կարենար մարդասպանութիւն մը գործել, և յայտնապէս երեւան կուգայ որ ցոյց արուած փաստը ամենապարզ սուտ մըն է :

Մնաց որ, Ֆրանսացի մը, M. Sabatier և Ապտիւլ Քալիք անունով պարկեշտ միւսլիման մը, վկայած են որ քահանան Իսլամներուն կողմէ սպաննուեցաւ՝ առանց ոչ մէկ պատճառի :

Իմ կարծիքով, Ստանայի դէպքերուն նկարագիրը բաւական չափով կը յայտնուի այն ուրախութիւններէն՝ որոնցմով Հայերու և ընդհանրապէս քրիստոնեայ տարրին դէմ տարուած յաղթանակը տօնուեցաւ : Ապրիլ 12ին, մինչդեռ մէկ կողմէն քանի մը սատիկան-զինուորներ՝ ջարդերէն վերապրած խեղճ Հայերու խումբ մը քաղաքէն դուրս կը վանէին, ուրիշ սատիկան-զինուորներ վիլայէթին բոլոր քարձք պաշտօնատարներուն ներկայութեանը. «Կեցցէ՛ Սուլթան Համիա, անկցի՛ ազատութիւնը» աղաղակներով Սահմանադրութեան վաղորդայնին քաղաքին հրապարակին վրայ կանգնուած յաղթական կամարը կը ֆակդիին :

Այս միջադէպը շատ յատկանշական է :

Գ.

Կառավարութեան ընթացքը դեպքերէն առաջ և վերջը

Վերև յիշատակուած իրողութիւնները ներկայացնելէ վերջ, ինծի աւելորդ կը թուի դրողիլ կուսակալ ձէվատ պէյի և Ստանայի պաշտօնատարներուն՝ ինչպէս նաև ձէպէլը-Պէրէքէթի կառավարիչին ընթացքին վրայ : Իմ կարծիքով, իրենց ընթացքը ապացուցած է, օրէնքով ճշտուած բոլոր պայմաններուն մէջ, որ անոնք բացարձակապէս յանցապարտ են իրենց

խառնակչութիւնով, կազմակերպչութիւնով և աշխատակ-
ցութիւնով: Սակայն ինչ որ ամէնէն սարսափելիին է այս
գարնուրբի դէպքերուն մէջ, իմ կարծիքով, վարուե-
լու այն եղանակն է՝ որուն Հայերը ենթարկուեցան
կոտորածներէն ետք, ինչպէս նաև այն դժոխային մի-
ջոցները՝ զորս գործադրեցին վերապրողները բնաջըն-
ջելու համար:

Զարդերէն վերջ Ատանայի մէջ գրեթէ Հայեր մը-
նացած չէին: Մէկ մասը սպաննուած էր, միւսը յաջո-
ղած էր փախչիլ. մնացորդը ոչխարի հօտի մը նման
գրուած էր քանի մը ոստիկան-զինուորներու հսկո-
զութեան տակ: Երբ քննութիւնը սկսաւ, մէկ կողմէ
կը տեսնուէր մարդկային խնդճուկ բեկորներ՝ սիրելի-
ներու մարմիններուն վրայ թափուած արցունքներէն
սպառած. միւս կողմէ՝ բոլոր գրգռիչները, ոճիրներու
կազմակերպիչները, թալանիչները և մարդասպանները:
Այս պայմաններուն տակ ի՞նչ ըրած է տեղական կա-
ռավարութիւնը: Մնիկա բանտարկեց վերապրողնե-
րուն մէջ աչի ընկնող բոլոր անձերը և զանոնք շրջ-
թայի գարիալ՝ կառավարութեան դէմ ապստամբած և
զինուորներուն վրայ զէնք պարպած ըլլալու ամբաս-
տանութեամբ:

Այս սարօրինակ ընթացքը արդիւնքը ունե՞
ցաւ չգիտցողներուն ալ սովրեցնելու որ՝ կոտորածնե-
րու հեղինակը և կազմակերպիչը նոյնինքն տեղական
կառավարութիւնն էր:

Երբէք չէ ուրացուած որ Հայերը զէնք գործածած
են: Ոչ ոք ուզած է նոյնպէս ուրանալ որ զինուոր-
ներ և ուրիշ խումբներ սպաննուած են Հայերու նե-
տած զնտակներէն: Բայց խնդիր է գիտնալը թէ՛ նման
պարագաներու տակ զէնքի գործածութիւնը կարելի՞ է
պատժել: Ահա այն խնդիրը՝ զոր մինչեւ այսօր լուծե-

չու մասին պատերազմական ատեանը բոլորովին անփոյթ կը գտնուի :

Ինչպէս արդէն ըսինք , Հայերը ապաստանած ըլլալով իրենց թաղը՝ իրենց տուներուն մէջ , իսլամ ամբողջը և զինուորները նոյն տեղը անոնց վրայ յարձակած են . այնպէս որ Հայերը միմիայն զբաղած են իրենց պաշտպանութիւնով : Այս մասին ոչ մէկ կասկած գոյութիւն ունի : Այն տուներուն ճակատները , ուր Հայերը դիմադրեցին , թէ՛ զինուորներու և թէ՛ պաշրպօզութիւններու կողմէ արձակուած դնդակներէն ծակծրկուած են :

Ո՞ր օրէնքը կամ խիղճը պիտի կարենար թոյլ տալ պատժելու անձ մը՝ որ սպաննած է նախայարձակ մէկը՝ նմանօրինակ պայմաններու մէջ :

Օրինաւոր ինֆնապաշտպանութիւնը՝ ո՛չ միայն օրէնքով ընդունուած է՝ այլ նաեւ բնական օրէնք մըն է՝ հաստատուած մարդկային խիղճով : Չկայ մարդ մը , նոյնիսկ անասուն մը , որ չըզգայ ինֆիլիք պաշտպանելու բնածին պէտքը :

Ինչ պատճառաբանութիւն կարելի էր մեջ բերել՝ ընդունելու համար որ Հայ տարրը գուրդ ըլլայ այս իրաւունքին :

Տեղական կառավարութիւնը , իր ոճիւրը թաղցնելու նպատակով , պատերազմական ատեանի կազմութենէն առաջ իսկ պատրաստեց սուտ վկաներ և ամբաստանողներ : Օգտուելով ջարդէ պրծած Հայերու վերադարձէն և այդ տարաբախտներու ազատ կերպով արտայայտուելու անհամարձակութենէն , ամէն ճիշդ թախած է այս զարհուրելի դէպքերու մեծութիւնը ծածկելու և անոնց բնոյթը եղծելու համար : Բոլոր այն Հայերը , որոնք օրինաւոր ինքնապաշտպանութեամբ իրենց զէնքին դիմած էին , քննութիւն կատարելու կամ վկայութիւններ առնուելու կեղծ պատրուակին տակ՝ ոճիւրով ամբաստանուեցան :

Յիշեալ կառավարութիւնը իր գործունէութեան չափանիշը ցոյց առաւ, պատերազմական ատեանին առջեւ զրկելով անմեղներու այս խումբը՝ զանոնք դատապարտել տալու նպատակով:

Գ.

Պատերազմական Ատեանը

Պատերազմական Ատեանը կազմող սպաներու պատուարութիւնը և պարկեշտութիւնը վիրաւորող ոչինչ պիտի ըսեմ: Սակայն, պէտք է յայտարարեմ որ անոնք չունէին բաւարար չափով օրինական և քննչական ծանօթութեանց զարգացումը: Չեմ կրնար նմանապէս իմ զարմանքս ծածկել այն իրողութեան որ միամտութիւնն ունեցան իբր դատական հիմ ընդունելու՝ անզայի բարձր պաշտօնեաներուն և ժողովուրդի զանազան խաւերուն կողմէ պատրաստուած դատախազներու բերած սխալ վկայութիւնները՝ մէկ կամ ամբողջ, մեծ ու պզտիկ բոլոր գործերուն մէջ, այնքան խոր կերպով ընդելուզուած էին:

Ատանայի պատերազմական ատեանի վճիռները տրուած ըլլալով այս հիմերուն վրայ, բնականօրէն զուրկ են դատաստանական և օրինական արժէքէ:

Վեց Հայեր յիշեալ ատեանին կողմէ դատապարտուած են մահուան՝ Օհան Օջլու խան կոչուած խանի մը մէջ յիմնեակ մը խալանիք ուղարկուած ըլլալու յանցանքով: Սակայն զարմանայի է որ նկատի չէ առնուած թէ, 1. Խնդրոյ առարկայ սպաննուած խալանիքը այդ խանին մէջ բնակողներ չէին. 2. Թէ անոնք կասկածելի մարդիկ էին, քաղաքին զանազան թաղերէն հա-

սած՝ Հայոց Թաղին կից այս խանին մէջ, ուր ընելիք բան մը չունէին, ինչ որ կ'ապացուցանէ թէ հոն հաւաքուած էին Հայերուն վրայ յարձակելու նպատակով. 3. Թէ իրենց մահը կը զուգադիպի ճիշտ Հայերուն դէմ եղած յարձակումին միջոցին :

Այն իրողութիւնը որ հանգիստ թողուած են հեղինակները այն անանուն ռճիրներուն՝ որոնց Ատանա և իր շրջակաները թատր հանդիսացած են և որոնք ազգային ազէտքի մը համեմատութիւնները առած են, այն իրողութիւնը՝ որով խնայուած է այս յերուզակներուն, և ասոր փոխարէն դատապարտուած են Հայ դժբախտ վերապրողներ, որոնց միակ յանցանքը օրինաւոր ինքնապաշտպանութեամբ մահուընէ խուսափելը եղած է, չեմ կրնար ինքզինքս արգիլել տեսնելէ կրկին տարագրութիւն մը՝ վերստին աչքէ անցուած և ճոխացած — Պոլսոյ համիտական կոտորածներուն :

Պատերազմական Ատեանի այդ էֆէնտիները բոլորովին կ'անդիտանան որ՝ ռճիրներու վերաբերեալ խընդիրներու մէջ դատաւորները սպիպուած չեն իբր պարզ ճշմարտութիւն ընդունիլ վկաներու բոլոր ըսածները, և թէ ընդհակառակը, անոնք օրէնքով պարտաւոր են ճշտելու թէ այդ տրուած վկայութիւնները կը յարմարին նիւթական կարելիութիւններու հետ, և հետեւաբար, ընդունելի՛ կամ ոչ :

Քննչական պայմաններու անբաւականութեան պատճառովն է որ պատերազմակ են ատեանը կը շարունակէ դատապարտել այնպիսի անձեր, որ շուկայէն փախչելով ապաստանած են օտարահպատակներու տուներ, ուրկէ, նոյնիսկ օտարահպատակ երեւելիներու հաւաստումներուն համաձայն, խուսիութեանց բովանդակ տեւողութեանը միջոցին դուրս չէին ելած :

Պարտաւոր ենք հաւասարապէս մտածել որ՝ պատե-

բաղմական ատեանը նմանապէս տեղեակ չէ Սահմանադրութեան պատմութեան և օսմանեան տարբերութեան և քաղաքական կեանքին : վասնզի անիկա Դաշնակցութեան կուսակցութենէն զատ Դրօշակ կոչուած յեղափոխական ինքնակոչ կուսակցութեան մը վրայ ալ կը խօսի, և յայտնի կերպով կատարելապէս կ'անդիտանայ որ Դաշնակցական կուսակցութիւնը նոյնքան կանոնաւոր և յարգելի կուսակցութիւն մըն է՝ որքան Իթթիհատ և Թէրաքքըն : Ատեանին մահալճիւնները տրուած են այն միւնոյն նախապաշարումներով՝ որոնց Հայ կուսակցութիւնները նշաւակ եղած էին հին վարչութեան օրով, և այսպէս անիկա կը կործանէ՝ Օսմանեան Սահմանադրութեամբ հաստատուած իրերու կարգը և քաղաքական և ընկերային կեանքը :

Այս ամէնը կրնա՞յ մեր արժանիքը և մեր ազգային պատիւը բարձրացնել յաշտ քաղաքակիրթ աշխարհի :



Վ Ե Ր Ջ Ա Ք Ա Ն



Այս սարսուղի ճշմարտութիւնները ճանչցնելու համար որոշուած տալէ առաջ՝ շատ տատանակցայ ու երկարօրէն մտածեցի: Պաղատարն ունեցայ նոյն խնդանոնք թեթեւցնելու՝ որպէս զի չի վշտացնեմ իմ Իսլամընկերակիցներս:

Սակայն ազգի մը անդամներէն կամ կրօնքի մը յարողներէն միոյն կողմէ գործուած ոճիրներու պատասխանատուութիւնը՝ չի կրնար հաւաքաբար կշռել այդ ազգին կամ կրօնքին վրայ:

Իսլամական օրէնքը, հեռի՛ ընդունելէ այդ կարգի վայրագութիւններ, ամենափոքր անարդարութիւն մը չի թողատրեր: Անիկա կը հրամայէ ամէն բանի մէջ ճշմարտութիւնը որոնել: Այս այսպէս ըլլալով, հարկ չի տեսայ ծածկելու այն իրողութիւնները՝ զորս ես հաստատած եմ և որոնց համոզումը ունիմ:

Չեմ կարծեր որ այդ ճշմարտութիւններու մերկացումը կարենայ տարրերու միջեւ անհամերաշխութիւնը աւելցնել: Վասն զի ես յոյս ունիմ որ այս վայրենի խեղագարութիւնը չպիտի երկար տեսէ:

Հին վարչութեան օրով սովորութիւն էր ոճիրները պահել, ուրանալ, փաստերը խեղաթիւրել:

Այդ փաստակար դրութեան չնորհիւ, այն հիւանդութիւնը, որմէ երկիրը կը տառապէր իբր շարաւալից վէրքէ մը, Կայսրութեան կողին փակչած փասխտի մը ձեւն առած էր:

Այդ, հիւանդութիւն մը կը բուժուի այն ատեն միայն՝ երբ կ'ախտաճանաչուի և կը դարմանուի :

Պահելով զանիկա՝ կարելի չէ բուժումը ձեռք բերել :

Գոհնէ այդպէս է իմ կարծիքս :

Վերջացնելէ առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու որ, Իրօքիմաս և Թերաֆը կուսակցութեան անդամները, Ասանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման և գործադրութեան մասնակցած են : Այս խողովութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերկացի միաբնակներէ և լատին քահանաներէ :

Բայ սատի, օտար թերթերը արձագանգը եղած են այս սարսափներուն, և հասարակաց կարծիքը գրեթէ համոզուած է որ՝ անոնք գործն են Իրօքիմաս և Թերաֆըին :

Այն պարագային, որ կուսակցութեան մասն կազկող ոճրապարտ անհատներ չարտաքսուին իր ծոցէն և իրենց արժանի պատիժը չի կրին, Իրօքիմաս և Թերաֆը վրայ ծանրացող մեղքերը անհերքելի պիտի մնային :

Ներկայ ժամուս, ուր կառավարութիւնը, եթէ կարելի է այսպէս ըսել, բոլորովին մեր կուսակցութեան ձեռքը կը գտնուի, կրնանք զոհերուն անմիջական օգնութիւն մը հասցնել, առանց բացառութեան յանցաւորները պատժել Օրէնքին բոլոր խստութիւնովը, և, նման ազգաներու կրկնութիւնը արգիլող անվրէպ միջոցներ ձեռք առնել, ու այսպէս կուսակցութեան և կառավարութեան վարկը վերահաստատել և Հայրենիքը փրկել :

13/25 Յունիս (1909)



Յ Ա Բ Ե Լ Ո Ւ Ա Ս



Իրենց նոյնիսան շահեկան պարունակութեանը հաւար, ստորև կը դնենք Պապիկանի այն քանի մը հետազոտները՝ որոնք իր կողմէ ի պատճօնէ ֆաշուած են Ասանային: Աւելցնենք որ ասէնիս, բոլոր այս փաւերսութիւնները շարաքաղ Ս. Սուրբի կողմէ շուսանկարուած են ուրիշներու կողմէ քրահներէնի քարգնանուեղով դրկուած և զանազան հայսնպաս իւրակցութեանց կաւ սննասներու, ստուց կարգին նաւէ Pro Armeniaի, ուրիշ քարգնանած ենք ներկայ գործին անբողոքիւնը:

Ե. Ս.

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

31 Մայիս 1325 (1909) հետազոտին

Երէկ մեկնեցանք Օսմանիէէն, և Հարունիէ գիւղէն անցնելով՝ ուշ ասն հասանք Պաղչէ: Այս գիւղին բնակչութիւնը յափշտակուած գոյքերու փնտաւութէն և վերագրաւումէն գրգռուած, Հայերուն դարձեալ կը սպասնայ: Իսլամները—չգիտեմ թէ ի՞նչպէս — տեղեկացած են Չորք-Մարգուանի վերջին միջագէտին, և այս առթիւ կը պատմին թէ այդ վայրը ոմբակոծուած է: «Չորք-Մարգուանի եկեղեցին կործանուած է, կ'ըսեն Հայերուն, ու մենք պիտի կոտորենք ձեռնէ բոլոր ողջ մնացողները: Հոս դանուող 25 զինուորները պիտի չի կրնան զձեզ պաշտպանել: Իսլամ կիները այս զինուորներուն ձեռքերը կապելու բաւական են»:

Կոտորածներէն խուսափած քանի մը Հայեր, այս սպառնալից չարախօսութիւններէն զաբնուրած, Պաղչէ

եկան՝ զինուորներուն հրամայող տասնապետի մը ընկերակցութեամբ : Անոնց հասնելէն ետք Պաղչէի մէջ հրկիզեցին դեռ կանգուն մնացող չորս տուներէն մին :

Հակառակ այս ամէն սարսափներուն , որուն վկան եղանք մեր անցքին վրայ ամէն տեղ , տեսանք Պաղչէի միւլֆթին — Չորք-Մարգուանի մէջ հսկողութեան տակ առնուած — որ իր ընկերներուն հետ ազատօրէն կը շրջէր :

Մեր քննութենէն կատարելապէս համոզուեցանք որ Բամազանի Պայրամէն առաջ իսլամներու և քրիստոնէականերու միջև յարաբերութիւնները լաւ էին : Այդ թուականին է որ Չարդի շուկները շրջան բնկու սկըսան : Այս խնդրոյն մասին բողոք բարձուած է Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչին մօտ , ու այդ պատճառով նոյն խի դատական քննութիւն մը բացուած է :

Իացի այս տարածուած գրոյցէն՝ որուն համաձայն Պաղչէի միւլֆթին իր քարոզներուն մէջ յայտարարած է թէ Սահմանագրութիւնը Հայերու դործն էր . թէ Սահմանադրական Վարչութիւնը Իսլամներուն փաստակար էր և թէ անոր հաստատած հաւասարութիւնը՝ Շէրիաթին հակառակ . այս միեւնոյն միւլֆթին օր առաջ տեղեակ էր այն դէպքերուն՝ որոնք չորեքշաբթի առտու պիտի ծագէին Առանայի մէջ , ու միեւնոյն օրուան իրիկունը Համիտիէի մէջ դիչերանց մարդ զրկած էր Հարունիէ՝ Հաճի Հալիլ պէյի և Հասան ազալի հետեւէն , անոնց հետ կազմակերպելու համար այն Չարդը և կողոպուտը՝ որոնց ուրբաթ սկսան :

Իարձեալ այս միեւնոյն միւլֆթին է որ Պաղչէի մէջ 30 ոսկի կաշառք գրպանած է Գերմաններէ՝ տեղւոյն մէջ ասոնց վարձած տունը պաշտպանելու համար :

Հակառակ անոր որ այս փաստերը ո՛չ մէկ հերքում կը վերցնեն , վերին աստիճանի զարմացած եմ

տեաննելով որ այս միւֆթին և իր արքանեակները ազատօրէն կը շրջին :

Այս իրողութիւնը, ինչպէս նաև միւֆթին Պաղչէ մուտքը իր որդւոյն հետ, ուր, իբր նշան ուրախութեան, ողջունուեցան հրացանաձողութեամբ իսլամ բնակչութիւնէն — որ սպառնալիքի տակ Հայերը ստիպած էր ի նպաստ միւֆթին հեռագիր քաշել և դոհունակութեան գիր մը ստորագրել — նոր քաջալերանք մը պիտի գտնէ իր սփիւններուն մէջ : Ընդհակառակը, վերոգրեալ դէպքերը Հայերուն համար պիտի ըլլան նոյնքան յուսահատութեան պատճառներ :

Ճշմարիտ Օսմանցիի իմ գգացումներս զիս կը մըզեն եզրակացնելու որ՝ այդ կարգի դէպքեր անկարելի կ'ընծայեն տարրերու միջև բարեկամական յարաբերութիւնները ո՛չ միայն այս տեղերուն՝ այլ և ամբողջ Կայսրութեան մէջ :

Գործելու այնպիսի ուղղութիւն մը ընդունած են, որուն ողբալի հետեւանքները հեռագրի մը մէջ խրատացրնել կարելի չէ : Բայց և այնպէս կուգամ յանուն Հայրենիքին խնդրել որ այդ բանէն հրաժարին :

ՀԵՌՍԻՐ ՈՒՂՂՈՒՍԾ ՎԱՐՉՍՊԵՏՈՒԹԵԱՆ

Քաշուած 25 Մայիս 1325 (1902) թուականին

Մեր Յանձնաժողովը ծանօթացաւ այն հեռագրին՝ զոր Ատանայի կրօնական պետերը Ձեր վսեմութեան ուղղած էին :

Իմ կարծիքով չասոնք կատարելապէս իրաւունք ունին :

Արդէն դժուար չէր նախատեսել թէ պատերազմական ատեանը այս արդիւնքին պիտի յանդէր : Ահա

թէ ինչո՛ւ պարտք համարած էի վճիռներու գործադրու-
թեան յեռաձգումը խնդրել : Այս խորհուրդը գժրադ-
գարար նկատողութեան չէ առնուած : Նոյնպէս Թարսու-
սէն քաջած էի հեռագիր մը , ստորագրուած նաև էսաս
Րէուֆ պէյի կողմէ , խնդրելու համար որ անարգարօ-
րէն բանտարկուած Հայերու — ինչպէս Քերովրէ էֆէն-
տիի — քննութիւնը կարենար շարունակուել՝ առանց
յիշեալները բանտին մէջ վար գրուելու :

Ձեր վսեմութիւնը հրամայած է ընթացք տալ այս
խնդրանքին , սակայն այդ հրամանը չէ գործադրուած .
վանդի մինչդեռ պատերազմական ատեանի պարտքն
էր Պաղտատի Չատէի , Պօշնաք Սալիհի , Ինսան Ֆիք-
րիի և Ստանալի Դաննց գործակիցներուն և Պաղչէի
Սայիտ աղայի , հաճի Սալիլի և Հտտան աղայի , ինչպէս
նաև Օսմանիէի և Ինսանիէի միեւնոյն դասակարգի
Չարդարարներուն քննութիւնները փութացնել և ան-
յապաղ վճիռները գործադրել , և , անգամ մը կարգը
վերահաստատելէ վերջ , պատժական կամ քաղաքա-
ւին ուրիշ յանցանքներու քննութիւնը թողուլ սովո-
րական գատարաններու : Պատերազմական Ստեանը ,
փոխանակ այսպէս վարուելու — ինչ որ իրեն համար
պարտականութիւն մըն էր — երկու ամսուայ իր գու-
մարումներու ընթացքին նկրտեցաւ Հայկական ասլըս-
տամբութիւն մը երեւան հանելու : Իր բոլոր գործու-
նէութիւնը յատկացուց պատժելու խեղճ վերապրող-
ներ — որոնց միակ ոճիրը այն էր որ իրենց կեանքը
պաշտպանած էին — , իր որոշումներուն մէջ հիմնուելով
միմիայն քաղաքային և զինուորական պաշտօնեանե-
րու յայտարարութեանց և վկայութեանց , ինչպէս նա-
և Պաղտատի Չատէի նման ոճրագործներու . բոլորը հե-
ղինակ և կազմակերպիչ խռովութեանց :

Վստահելի աղբիւրէ մը տեղեկացած եմ որ , Հա-

ճընի շրջանակին մէջ, մեծ թիւով Հայեր 7—8 հոգի-
նոց խումբերով շղթայի զարնուած՝ ամենազէշ վար-
մունքներու զոհուած են :

Երէկ ուշ ժամանակ հոս հասայ և տեղեկացայ թէ,
հակառակ Ձերդ վսեմութեան հրամանին, Քերովրէ Է-
ֆէնտին և իր դասակարգին պատկանող Հայերը ա՛լ ա-
ւելի մեծ խտուրթիւններու առարկայ են, և թէ Հա-
յերէն մաս մը դաղթելու սկսած է :

Նախորդ կուսակալ ձեւատտ պէյ, թերթերու մէջ
հրատարակուած իր տեղեկագրով կը հաւատէ թէ՝
կոտորածը սկսած է զրոյցի մը հետեւանքով — որուն
ստուրթիւնը այլապէս ծանօթ է ճալիտ պէյի — որուն
համաձայն իրր թէ կին մը և քանի մը իսլամներ Հա-
յերու կողմէ սպաննուած են այդիներուն մէջ :

Սակայն դատարանական թղթերով [և վաւերական
տեղեկութիւններով վճռականօրէն հաստատուած է թէ՝
ջարդերու շուկները Բամազան Պայրամիէն իվիր շըր-
ջան կ'ընէին : Ընկերակիցներս ալ այս կէտը հաստա-
տած են իրենց հեռագիրներուն մէջ :

Ըստ իս, միմիայն ձէպէլը-Պէրէքէթի սանճագին
մէջ, կոտորուած Հայերու թիւը նուազագոյն 3000ը
կ'անցնի : Բացի Չորք-Մարդուանէն, ուր Հայերը օրի-
նաւոր դիմադրութիւն մը ըրած են, բոլոր գաւառին
մէջ հայապատկան միակ չէնք իսկ կանգուն չի մնար :

Հետեւաբար եթէ պատերազմական ատեսանը՝ աղէ-
տէն փրկուած Հայերը նեղելէ չարգիլուի, ներկային և
ապագային համար բացած պիտի ըլլանք անբուժելի
վէրքեր :

Պատիւ ունիմ վերջին անգամ ասիկա Ձերդ վսե-
մութեան յայտարարելու :

ՀԵՑՊԳԻՐ ՈՒՂՂՈՒՄԾ ՎՍՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏԵՐԱՉՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌՆԵՐՈՒ

ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՂԵՐՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թուական 7 մունիս 1325 (1909)

Կը խնդրուի Ձեր վսեմութենէն որ բարեհաճի յեւ
տաձգել պատերազմական ատեանի վճիռներուն դոր-
ծադրութիւնը՝ միջեւ որ մեր քննութիւնը աւարտի:

ՅԱԿՈՒՅ

ԶՈՇԵՐՈՒ ԹԻՒԸ

Ատանայի և իր չրջանակներուն մէջ սպաննուած
Հայերու թիւը մտաւորապէս 21,000 հոգիի կը հասնի:

Այս թիւը կը բաժնուի հետեւեալ կերպով.

Ատանա և չրջակայ ազարակներու մէջ	9780
Թանրը-Վէրաի » » »	1280
Սայ-Կէչիտ	850
Էսէ Հաճիլի	1558
Օսմանիէ	1111
Պօստան-Չիֆթիլիք	1277
Քուրալար	3623

19,479

Յոյներ	250	
Սուրիացիներ (Սիւրիանի)	850	
Քաղղէացիներ (Քիլասանի)	422	1522

Համագումար

21,001

Թէպէտև Հայ, Հայ-Կաթոլիկ, Բողոքական, Յոյն,
Սուրիացի և Քաղղէացի Առաջնորդարաններու տուած
թիւերը 21,000ի դումարը կ'անցնին, սակայն մեր քըն-
նութիւնը հաստատեց այս վերջին թիւը:

Անկախաբար այս զոհերէն, զանազան իսլամ ազա-
րակներու մէջ սպաննուած են ուրիշ անձեր՝ օրոնց թի-
ւը յայտնի չէ:

“ ԿԻԼԻԿԻԱ,, ԳՐԱՏՈՒՆԸ

Ունի ամէն տեսակ գիրքեր և հանդէսներ՝ մասշտաբ գիներով: Կը զնե հին ու նոր գիրքեր, թերթեր և ձեռագիրներ: Կըսանանք ամէն կարգի տպագրական և հրատարակչական գործեր: Կը բաժանորդագրեք Օրաթերթերու և Պարբերականներու: Պատասխան ունի Հայկ. Պատերազմաթեան առանձին և խմբովին քաջուած լուսանկարները՝ մեծադիր և փոքրադիր, և դանազան տեսակի քօքարթիւններ: Ունի նաեւ մասնաւոր սպասարկութիւն՝ լրագրական ազգերու համար:

Ապառիկ Գործառնութիւնի յի կտէյ

ՀԱՍՅԷ՝ Գալարիսթան փողոց,

Աւերիկեան Բնականսան դեմ թիւ 37

Բերս, 4, Պոլիս

Librairie “ LA CILICIE ”,

No. 37, rue Cabristan, en face de l'Ambassade
des Etats-Unis

Péra-Constantinople

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ս Ի

ԱՆՀՅՅԱՅՈՂ ԳԷՍԳԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕԼՐԱՊ

Գործ՝ ԱՐՇՍԿ ԱԼՊՅԱՅԵԱՆԻ

(Բազմաթիւ պատկերներով եւ վաւերապատկերով)

Գին՝ մէկ օստ. ոսկի

Մեծաքանակի համար 20% զեղչ

Գինի Հեղինակին՝

Ղալաթիա, Իւնիոս խան, թիւ 54,

կամ «ԿԻԼԻԿԻԱ» Գրատունը

« Ազգային գրադարան



NL0411954

